Երկրորդ ընթերցում
Նախագիծ

Կ-1218-18.08.2011-ՊԻ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2003 թվականի ապրիլի 18-ի քրեական օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 24-րդ, 266-270-րդ, 272-274-րդ հոդվածներում և 1-ին հավելվածում «հոգեմետ» բառը փոխարինել «հոգեմետ (հոգեներգործուն)» բառերով:

Հոդված 2. Օրենսգրքի 266-րդ, 272-րդ և 275-րդ հոդվածներում «հոգեներգործուն» բառը փոխարինել «հոգեմետ (հոգեներգործուն)» բառերով:

Հոդված 3. Օրենսգրքի 266-րդ հոդվածի՝

1) վերնագրում «իրացնելու» բառից հետո լրացնել «կամ պատրաստելու» բառերը.

2) 4-րդ մասի սանկցիայում «երկուհարյուրապատիկի» բառը փոխարինել «չորսհարյուրապատիկի» բառով.

3) 4-րդ մասից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 4.1 և 4.2 մասեր.

«4.1. Սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝

1) մի խումբ անձանց կողմից,

2) խոշոր չափերով՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով:

4.2. Սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝

1) կազմակերպված խմբի կողմից,

2) առանձնապես խոշոր չափերով՝

պատժվում է ազատազրկմամբ՝ հինգից ութ տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա:»,

4) 5-րդ և 6-րդ մասերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**5.** Սույն գլխի իմաստով թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի զգալի, խոշոր և առանձնապես խոշոր չափեր, ինչպես նաև դրանց պրեկուրսորների խոշոր և

առանձնապես խոշոր չափեր են համարվում սույն օրենսգրքի թիվ 1 և թիվ 4 հավելվածներով նախատեսված չափերը:

6. «Թմրամիջոցներ կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր, դրանց պրեկուրսորներ, ինչպես նաև խիստ ներգործող կամ թունավոր նյութեր կամովին հանձնող անձն ազատվում է հանձնված թմրամիջոցները կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութերը, դրանց պրեկուրսորները կամ խիստ ներգործող կամ թունավոր նյութերն ապօրինի պատրաստելու, վերամշակելու, ձեռք բերելու, պահելու, փոխադրելու կամ առաքելու համար սույն գլխի 266-րդ, 268-րդ և 275-րդ հոդվածներով նախատեսված քրեական պատասխանատվությունից:»:

Հոդված 4. Օրենսգրքի 275-րդ հոդվածի 4-րդ մասը ճանաչել ուժը կորցրած:

Հոդված 5. Օրենսգրքի 296-րդ հոդվածի 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Սույն հոդվածում զգալի վնաս է համարվում հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկը չգերազանցող գումարը (արժեքը), խոշոր վնաս է համարվում չորսհարյուրապատիկից յոթհարյուրապատիկը չգերազանցող գումարը (արժեքը), առանձնապես խոշոր վնաս է համարվում յոթհարյուրապատիկը գերազանցող գումարը (արժեքը):»:

Հոդված 6. Օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասի դիսպոզիցիայում «դա» բառը փոխարինել «բռնություն» բառով:

Հոդված 7. Օրենսգիրքը լրացնել N 4 հավելվածով՝ համաձայն հավելվածի:

Հոդված 8. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հավելված

«---------» ------ 2011թ.
ՀՕ- -------- -Ն օրենքի

Հավելված N 4
Հայաստանի Հանրապետության
Քրեական օրենսգրքի

ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ ՀՈԳԵՄԵՏ (ՀՈԳԵՆԵՐԳՈՐԾՈՒՆ) ՆՅՈՒԹԵՐԻ ՊՐԵԿՈՒՐՍՈՐՆԵՐԻ ԽՈՇՈՐ ԵՎ ԱՌԱՆՁՆԱՊԵՍ ԽՈՇՈՐ ՉԱՓԵՐԸ

Հ/h	Անվանումներ	Չափերը՝ կիլոգրամներով

		Խոշոր…-ից մինչև… ներառյալ	Առանձնապես խոշոր, ավելի քան
1.	Անտրանիլաթթու	2,5-25,0	25,0
2.	N-Ացեթիլանտրանիլաթթու	0,3-3,0	3,0
3.	Ացետոն	39,0-157,0	157,0
4.	Էթիլ եթեր	14,0-142,0	142,0
5.	Էրգոմետրին	0,0003-0,003	0,003
6.	Էրգոտամին	0.0003-0.003	0,003
7.	Իզոսաֆրոլ	0,5-5,0	5,0
8.	Կալիումի պերմանգանատ	1,0-3,0	3,0
9.	Ծծմբական թթու	20,0-100,0	100,0
10.	3,4-Մեթիլենդիոքսիֆենիլ-2-պրոպանոն	0,21-2,1	2,1
11.	Մեթիլ էթիլ կետոն	25,0-250,0	250,0
12.	Պիպերիդին	0,023-0,23	0,23
13.	Պիպերոնալ	0,2-2,0	2,0
14.	Սաֆրոլ	1,0-10,0	10,0
15.	Տոլուոլ	23,0-230,0	230,0
16.	Քացախաթթվի անհիդրիդ	0,23-2,3	2,3
17.	Աղաթթու	20,0-100,0	100,0
18.	Ֆենիլացետոն	0,04-0,4	0,4
19.	Ֆենիլքացախաթթու	1,0-10,0	10,0
20.	Լիզերգինային թթու	0,0001-0,001	0,001
21.	Լուծիչներ, պարունակող ոչ պակաս քան 10% ացետոն, էթիլային եթեր, մեթիլ էթիլ կետոն եւ տոլուոլ	50,0-200,0	200,0